ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1408-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է մեծ պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշերի վճարների չափերը վերանայելու, ինչպես նաև «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությանը և դրան անդամակցող ապահովագրական ընկերություններին ճանապարհատրանսպորտային պատահարների ելակետային տվյալների վերաբերյալ օրենքով չարգելված տեղեկատվության ամբողջական և ճիշտ հավաքագրումն ու կենտրոնացված կարգով տրամադրումն ապահովելու անհրաժեշտությամբ:

Ներկայումս 150.000 դրամ, 600.000 դրամ, 1.500.000 դրամ, 3.000.000 դրամ և 8.000.000 դրամ արժեք ունեցող շատ համարանիշեր վճարի բարձր չափի պատճառով պահանջարկ չունեն և չեն իրացվում, իսկ վճարների չափի գործող սահմանումները հնարավորություն չեն տալիս համարժեք նվազեցնել դրանց վճարների չափերը:

Ճանապարհատրանսպորտային պատահարների ելակետային տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայումս հավաքագրվում է և Ճանապարհային ոստիկանության, և ապահովագրական ընկերությունների կողմից, ինչը հետագայում խնդիրներ է առաջացնում վարույթի իրականացման և հատուցումների տրամադրման գործընթացում: Արդյունքում, խախտվում է տուժած անձանց հատուցում ստանալու իրավունքը, իսկ մեկից ավելի իրավասու անձանց գործողություններով պայմանավորված՝ պատահարների վայրերում առաջանում են խցանումներ՝ առաջացնելով երթևեկության մասնակիցների դժգոհությունը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

150.000 դրամ, 600.000 դրամ, 1.500.000 դրամ, 3.000.000 դրամ և 8.000.000 դրամ արժեք ունեցող համարանիշերի համար պահանջարկ ստեղծելու համար անհրաժեշտ է այդ համարանիշերի արժեքը որոշակի չափով նվազեցնել:

ԱՊՊԱ ոլորտի օրենսդրության (ներառյալ՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության խորհրդի որոշումների) փոփոխություններով նախատեսվում է, որ ճանապարհատրանսպորտային պատահարների ելակետային տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հավաքագրվի միայն Ճանապարհային ոստիկանության կողմից՝ սահմանված ձևաչափով, այնուհետև կենտրոնացված կարգով փոխանցվի «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությանը և դրան անդամակցող ապահովագրական ընկերություններին:

Որոշման նախագծով նախատեսվում է լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության արտաբյուջետային ֆոնդ վճարման ենթակա վճարների չափերը» N 1408-Ն որոշման մեջ, և՝

1) մեծ պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշերի համար սահմանել նաև 100.000 դրամ, 500.000 դրամ, 1.000.000 դրամ, 2.000.000 դրամ և 5.000.000 դրամ վճարների չափեր.

2) «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությանը և դրան անդամակցող ապահովագրական ընկերություններին ճանապարհատրանսպորտային պատահարի ելակետային տվյալների վերաբերյալ օրենքով չարգելված տեղեկատվության տրամադրման համար սահմանել 4.000 դրամ վճար:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագիծը մշակվել է Ճանապարհային ոստիկանության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունմամբ ներկայիս 150.000 դրամ, 600.000 դրամ, 1.500.000 դրամ, 3.000.000 դրամ և 8.000.000 դրամ արժեք ունեցող համարանիշերի համար կապահովվի պահանջարկ, ինչպես նաև կապահովվի «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությանը և դրան անդամակցող ապահովագրական ընկերություններին ճանապարհատրանսպորտային պատահարների ելակետային տվյալների վերաբերյալ օրենքով չարգելված տեղեկատվության ամբողջական և ճիշտ հավաքագրումն ու տրամադրումը, իսկ դրա արդյունքում՝ նաև տուժած անձանց հատուցում ստանալու իրավունքը: Բացի այդ, կնվազեն պատահարների վայրերում առաջացող խցանումները:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1408-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1408-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1408-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1408-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանա:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ